Կարգապահական գործ թիվ ԿԳ-17117

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի փետրվարի 20-ի թիվ 30-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/21-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԵՆՐԻԿ ՄԱՂԱՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող Խորհրդի անդամ՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հենրիկ Մաղաքյանին (արտոնագիր՝ 190) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

21.08.2017թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում **(այսուհետ՝ նաև Պալատ)** մուտքագրվել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան կամ Դիմող)** դատավոր Հ. Ավագյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 15.08.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում կամ Դատական սանկցիա)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԿԴ2/0069/01/16 քրեական գործով 15.08.2017թ. դատական նիստի ընթացքում ամբաստանյալ Կարինե Առաքելյանի պաշտպան Հենրիկ Մաղաքյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) վկային ուղղել է կրկնվող և նույնաբնույթ հարցեր, իսկ երբ նախագահող դատավորը հորդորել է պաշտպանին դադարեցնել նման վարքագիծը, Հենրիկ Մաղաքյանը դատավորի խոսելու ընթացքում նրան ընդհատել է և բարձր ձայնով դիմել Դատարանին: Պաշտպանին ուղղված ձայնը չբարձրացնելու՝ նախագահող դատավորի պահանջից հետո Հենրիկ Մաղաքյանը սկսել է բղավել՝ նշելով, որ չի իջեցնելու ձայնը:

Դատարանը գտել է, որ պաշտպան Հենրիկ Մաղաքյանի դրսևորած վարքագիծն իր մեջ պարունակում է դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք: Դատարանը որոշել է դիմել Պալատ՝ փաստաբան Հենրիկ Մաղաքյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 22.09.2017թ. թիվ 301-Ա/ԿԳ-17117 որոշման հիման վրա փաստաբան Հենրիկ Մաղաքյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

27.09.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում նշել է հետևյալը.

Պատասխանողի պաշտպանյալ Կարինե Առաքելյանի պաշտպանությունն ստանձնել է գործի քննության վերջում: Նախքան 15.08.2017թ. դատական նիստը խնդրո առարկա գործով Պատասխանողի մասնակցությամբ տեղի է ունեցել ևս մեկ դատական նիստ, որտեղ Պատասխանողը միջնորդել է դատարանին գործի քննությունը հետաձգել այն հիմքով, որ ինքը նոր է ներգրավվել գործի քննությանը, և իրեն ժամանակ է հարկավոր գործին նյութերին ծանոթանալու համար: Նույն նիստում Պատասխանողը, դիմելով դատարանին և մեղադրողին, ասել է, որ նրանց շատ է հարգում, սակայն ինքը եկել է արդարադատության իրականացմանը նպաստելու և իր պաշտպանյալի պաշտպանությունն իրականացնելու պարտականությունը կատարելու նպատակով և նրանց խնդրել է իր այդ պարտականությունների իրականացման ճանապարհին արհեստական խոչընդոտներ չստեղծել, քանի որ ինքը դրանք հաղթահարելու է բոլոր թույլատրելի ձևերով:

Չնայած իր հորդորներին՝ 15.08.2017թ. նիստին հարցաքննվել է ընդամենը մեկ վկա, որը գտնվել է հիստերիկ վիճակում և անընդհատ նայել է նիստին ներկա գործով տուժող բանկի ներկայացուցիչների կողմը՝ նրանցից ուղղորդումներ ստանալու նպատակով:

15.08.2017թ. նիստում Նիստը նախագահող դատավորը խոչընդոտել է գործի քննությանը և, մասնավորապես, օգտագործել է այնպիսի բառեր, որ պաշտպանյալին լարի պաշտպանի դեմ: Նախքան Պատասխանողի՝ առարկություն ներկայացնելը դատավորը հնչեցրել է փաստաբանին վիրավորող բառեր: Պատասխանողը պարզապես պաշտպանել է իր անձնական և մասնագիտական արժանապատվությունը:

Պատասխանողը նշել է, որ ունի բարձր ձայն և հանգիստ խոսելու դեպքում էլ նրա ձայնը բարձր է: Ավելին՝ այլ դատավորների նախագահությամբ նիստերում

Պատասխանողն ավելի բարձր ձայնով է ելույթ ունեցել, քան խնդրո առարկա նիստում, սակայն դատարանն իր նկատմամբ սանկցիա չի կիրառել՝ ընդունելով, որ Պատասխանողն ուղղակի բարձրաձայն է խոսում: Դատական նիստում Պատասխանողը բարձրաձայն է խոսել ոչ թե դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու նպատակով, այլ իր ձայնային տվյալների պատճառով: Դատավորի զգուշացումից հետո ինքը շարունակել է խոսել, քանի որ ինքն առարկել է նախագահողի գործողությունների դեմ, իսկ դատավորը փորձել է իրեն լռեցնել:

Պատասխանողը նշել է, որ նույնիսկ այն բանից հետո, երբ դատավորն իր նկատմամբ սանկցիա կիրառելու որոշում է կայացրել, ինքը դատավորին ասել է, որ հարգում է իրեն՝ անկախ ամեն ինչից և միաժամանակ նշել է, որ հաջորդ նիստին դատավորի ինքնաբացարկի միջնորդություն է ներկայացնելու: Չնայած այն հանգամանքին, որ նախագահողը թույլ է տվել ապօրինություններ՝ Պատասխանողի պնդմամբ, ինքը նիստը նախագահողի գործողությունների դեմ վերադաս դատական ատյան բողոք չի ներկայացրել:

Վկայի հարցաքննության ժամանակ նույնաբնույթ հարց տալու հետ կապված՝ Պատասխանողը նշել է, որ դրա նպատակը հարցաքննվող վկայի և նրա դստեր, ով նույնպես վկա էր, ցուցմունքներում առկա հակասությունը պարզելն էր, որը կարևոր էր գործի ճիշտ լուծման համար: Մինչդեռ, ըստ Պատասխանողի, դատարանը կամայականորեն ընդհատել է վկայի հարցաքննությունը:

Պատասխանողի կարծիքով, նիստը նախագահող դատավորը փաստաբանի և փաստաբանության նկատմամբ ունի արհամարհական և ատելության հասնող բացասական վերաբերմունք, մինչդեռ ընդգծված լավ է վերաբերվում դատախազին:

Անդրադառնալով դատական նիստի ձայնագրության այն դրվագին, որտեղ դատարանի կարգադրությանը ձայնն իջեցնելու վերաբերյալ Պատասխանողը հակադարձում է, որ ձայնը չի իջեցնի՝ Պատասխանողը նշեց, որ դրա պատճառն այն էր, որ դատարանն անընդհատ միջամտում էր վկայի հարցաքննությանը՝ նշելով, որ վկային չեն հրավիրել, որ տանջեն, իսկ վկան նաև Պատասխանողի հարցերի հետևանքով հայտնվել էր հոգեկան խիստ հուզմունքի վիճակում՝ նայելով դատախազին և դատավորին՝ չիմանալով՝ ինչ պատասխանի:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը 27.11.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն նախագահող դատավորի խոսելու ընթացում պաշտպանը բարձրաձայն հայտարարություն է անում և դիմում է դատարանին: Նախագահող դատավորը դիմում է պաշտպանին «Ձայնը մի բարձրացրեք ինձ վրա, փողոցում չեք գտնվում, հարգելի պաշտպան, Ձեր ձայնը իջացրեք…», իսկ պաշտպանը պատասխանում է «ես չեմ իջեցնելու իմ ձայնը, որովհետև Դուք անընդհատ խոչընդոտում եք…»: Նախապատաստողը նշել է նաև, որ հնարարավոր

չի եղել պատասխանել այն հարցին, թե արդյոք դատավորի հետ բարձ խոսելը կարող է գնահատվել և ընկալվել որպես «բղավել»:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողը ներկայացրել է առարկություն, որը Պալատ է մուտքագրվել 06.12.2017թ: Առարկության մեջ Պատասխանողը նշել է, որ կարևոր էր լսել նաև իր պաշտպանյալ Կարինե Առաքելյանի կարծիքը, թե նա ինչպես է ընկալում և գնահատում իր պաշտպանությանն ուղղված, սանկցիայի ենթարկված՝ Պատասխանողի գործողությունները: Պատասխանողը գտնում է, որ Նախապատրաստողը, եզրակացություն կազմելիս, բացի դատական նիստի արձանագրության կրիչի միայն իր առարկությունները ներկայացնելու հատվածը հետազոտելուց, պետք է հետազոտեր նաև դրան նախորդող՝ նախագահող դատավորի կողմից պաշտպանական կողմի աշխատանքները խոչընդոտող (տվյալ դեպքում՝ վկա Ռուզաննա Ասատրյանին հարցեր տալուն հեգնանքով և վիրավորական տոնով արգելելը) անօրինական գործողություններն արձանագրած ձայնագրությունը, ինչից պարզ կդառնար, որ Պատասխանողը, ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, Կանոնագրքի 2.1, 2.2, 2.6, 4.1, 4.2 և 5.1 կետերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ և 73-րդ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով, ընդամենը, տվյալ իրադրությանը համապատասխան, իր սովորական առոգանությամբ առարկություններ է ներկայացրել դատավորի անօրինական գործողությունների դեմ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 28.11.2017թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 20.02.2018թ. ժամը 19:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

-Թիվ ԿԴ2/0069/01/16 քրեական գործով ամբաստանյալ Կարինե Առաքելյանի պաշպան է հանդիսացել փաստաբան Հենրիկ Մաղաքյանը.

-Թիվ ԿԴ2/0069/01/16 քրեական գործով 15.08.2017թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին փաստաբան Հենրիկ Մաղաքյանը վիճաբանել է նիստը նախագահող դատավոր Հ. Ավագյանի հետ.

-15.08.2017թ. ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին նախագահող

դատավորը միջամտել է փաստաբան Հենրիկ Մաղաքյանի կողմից վկայի հարցաքննությանը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ ովում՝ Որոշմամբ, դատական նիստի ձայնագրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Հենրիկ Մաղաքյանը փաստաբան է հանդիսանում 01.02.1982թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է մեկ կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հենրիկ Մաղաքյանի նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին (**այսուհետ՝ նաև ՔԴՕ**):

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝*

«(…)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին

(…)

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(…)»:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ Կանոնագիրքը և քրեադատավարական օրենսդրությունը փաստաբանի համար սահմանել են դատարանում սահմանված վարվելակերպի կանոններին ենթարկվելու, դատավորին հարգանքով վերաբերվելու, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին ենթարկվելու, դատական նիստում կարգուկանոն պահպանելու պարտականություն: Մինչդեռ, փաստաբանի՝ նման պարտականություն կրելը որևէ կերպ չի չեզոքացնում նրա հնարավորությունը՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Ուստի՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը գնահատելու և Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշները պարզելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել դատարանում փաստաբանի վարքագծի դրսևորումները, ներառյալ՝ դատարանի նկատմամբ դրսևորած գործողությունների, կատարված արտահայտությունների բնույթն ու բովանդակությունը՝ պարզելու համար, թե արդյոք փաստաբանը, որոշակի վարքագիծ դրևորելով կամ արտահայտություններ կատարելով, դուրս է եկել դատարանի դահլիճում արտահայտվելու ազատության և դատավորի գործողությունների դեմ առարկելու թույլատրելի շրջանակներից:

Սույն գործի հանգամանքներից հետևում է, որ դատարանը փաստաբան Հենրիկ Մաղաքյանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա, որը պայմանավորված է եղել նրանով, որ պաշտպանը բարձր ձայնով է դիմել Դատարանին՝ բղավել է:

Ըստ հաստատված փաստերի թիվ ԿԴ2/0069/01/16 քրեական գործով 15.08.2017թ. դատական նիստում Պատասխանողն առարկել է նախագահող դատավորի գործողությունների դեմ այն բանից հետո, երբ վերջինս միջամտել է Պատասխանողի կողմից գործով վկայի հարցաննությանը: Դատավորը կարգադրել է Պատասխանողին լռել, սակայն Պատասխանողը չի ենթարկվել այդ կարգադրությանը: Խորհուրդն արձանագրում է, որ նախագահող դատավորի գործողություններին փաստաբանի առարկելը չի կարող համարվել դատավարական կարգի խախտում և դատավորի օրինական կարգադրությանը չենթարկվել: Խորհուրդն արձանագրում է նաև, որ որ փաստաբանը նիստի ընթացքում խոսում է բարձր տոնայնությամբ, սակայն գործում առկա դատական նիստի ձայնագրառման կրիչի ուսումնասիրությունից հնարավոր չի եղել այն գնահատել որպես «բղավել»:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի վարքագծում առկա չեն Կանոնագրքի 4.1 կետի խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 22.09.2017թ. թիվ 301-Ա/ԿԳ-17117 որոշման հիման վրա փաստաբան Հենրիկ Մաղաքյանի (արտոնագիր՝ թիվ 190) նկատմամբ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան

20 փետրվարի 2018թ.
թիվ ԿԳ/21-Ա
ք. Երևան